«ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
ԾԻԳ ՊՀ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻԿՐՈԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1

Երևան, 2025թ.

bakertilly

Բովանդակություն

1. Ծրագրի համառոտ ակնարկը, հետազոտության նպատակը, խնդիրները 3

2. Աշխատանքների նկարագրություն 6

Ընտրանք 6

Հետազոտությունը՝ թվերով 9

Արդյունքների վերլուծություն 12

Երեխաների թեստավորում 12

Պարապմունքի դիտարկում 13

Հարցազրույցներ, ֆոկուս խմբային քննարկումներ 14

Ստանդարտացված հարցումներ 14

Ֆիզիկական միջավայրի դիտարկում 14

Հավելված 1. Չափանիշների թվային արտահայտությունները 15

Հավելված 2. Լրացուցիչ, օժանդակ և համեմատական խմբի համայնքների բաշխում 16

Հավելված 3. Որակական հետազոտությունների բաշխումը՝ ըստ նախակրթարանների և կատեգորիաների 19

Ծրագրի համառոտ ակնարկը, հետազոտության նպատակը, խնդիրները

Այս ծրագրի նպատակը երեխաներին տարրական դպրոցին նախապատրաստելն է՝ հիմք ստեղծելով երեխայի ֆիզիկական, հոգեբանական և մտավոր զարգացման համար, ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ:

2014 թվականին Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի (ՀԲ) հետ ստորագրել է ֆինանսավորման վարկային համաձայնագիր՝ ի աջակցություն «Կրթության բարելավում» ծրագրի (ԿԲԾ) իրականացմանը: Ծրագիրը հաջողությամբ ավարտվել է 2022 թվականի ապրիլին: Միևնույն ժամանակ, Հայաստանի կառավարությունը դիմել և ստացել է ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (ԼՖ). Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2022 թվականի հունիսի 9-ին ստորագրվել է թիվ 9389-AM վարկային համաձայնագիրը:

«Կրթության բարելավում» ծրագրում (ԿԲԾ) ընդգրկված բոլոր նախակրթարանները համալրվել են նոր կահույքով, ուսումնական և ուսուցողական նյութերով: Նոր ստեղծված նախակրթարանների խմբասենյակները ապահովում են համապատասխան միջավայր երեխաների ազատ և դինամիկ զարգացման համար, ինչպես նաև խթանում երեխաների իմացական, ֆիզիկական և ստեղծագործական ունակությունները:

Հետազոտության նպատակն է՝ գնահատել նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների դպրոցական պատրաստվածությունը և ուսումնասիրել նախադպրոցական կրթության որակի վրա ազդող գործոնները վաղ զարգացման գործիքի կիրառմամբ (յուրաքանչյուր տարի՝ ըստ մարզերի և միկրոծրագրերի իրականացման գործընթացի), ինչպես նաև ուսումնասիրել ներդրումների/միջամտությունների տեսակները, որոնք առավել կարևոր են ծրագրի իրականացման առաջին փուլում հաջող արդյունքների հասնելու համար:

Նախադպրոցական միկրոծրագրերն իրականացվել են ըստ հետևյալ փուլերի.

- 2023 թ-ին իրականացվել են՝ 29[1],
- 2024թ-ին՝ 24[2] միկրոծրագրեր։

Համաձայն «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի աշխատանքային պարտականությունների նկարագրության՝ հետազոտությունն իրականացվել է երկու անգամ՝ ուսումնական տարվա սկզբին և ուսումնական տարվա ավարտին։

Ուսումնասիրվել է երեխաների երեք խումբ.

- թիրախային խումբ՝ ՀԲ աջակցությամբ իրականացված միկրոծրագրերում ընդգրկված երեխաների խումբ,
- համեմատական խումբ՝ առանց ՀԲ աջակցության իրականացված միկրոծրագրերում ընդգրկված երեխաների խումբ,
- ստուգիչ խումբ՝ միկրոծրագրում չընդգրված երեխաների խումբ։

Հետազոտության խնդիրներն են.

- միկրոծրագրի ուսումնական տարվա սկզբի ու վերջի կտրվածքով ուսումնասիրել և նկարագրել թիրախային, համեմատական և ստուգիչ խմբերի երեխաների զարգացման դինամիկան, պատրաստվածությունը դպրոցին՝ ուսումնասիրելով երեխայի զարգացման գերակա ոլորտները՝ (սոցիալ-անձնային և հուզական ոլորտ, իմացական ոլորտ, ինքնասպասարկման և առողջ ապրելակերպի ոլորտ, լեզվի և հաղորդակցման ոլորտ և շարժողական ոլորտ):
- ուսումնասիրել միկրոծրագրերում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի վրա ազդող գործոնները.

Ուսուցում	Ուսումնասիրել առաջնային ուսուցանողների (դաստիարակ, նախակրթարանի տնօրեն) մասնագիտական հմտությունները՝ աշխատանքային փորձ, ստաժ, վերապատրաստումներ, պարզել

[1] Կոտայքի և Արագածոտնի մարզերում բացված մեկական նախակրթարաններ 2024-2025 ուստարում չեն գործել։
[2] Երեք նախակրթարան ուսումնական գործընթացը սկսել է 2025-2026 ուստարում։

	ուսուցանման ծրագրերի յուրացման աստիճանը, վերջիններիս հանդեպ վերաբերմունքը, նրանց՝ վերապատրաստումից բավարարվածության աստիճանը, պարզել դասավանդման մեթոդների, սկզբունքների կիրառությունը, ուսուցանման գերակա ոլորտների կիրառությունը, ուսուցանման մեջ երեխայի ընդգրկվածությունը:
Ընտանիքի ազդեցություն	Պարզել ընտանիքում երեխայի դաստիարակության հիմնական դերակատարին, դաստիարակման մեթոդները, արժեքները, երեխայի ուսուցանմանը ծնողների մասնակցության պատրաստակամությունը և բնույթը, նկարագրել երեխայի ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը: Անհրաժեշտ է նաև բացահայտել, թե որքանով է սոցիալ-տնտեսական վիճակը (համայնքի, ընտանիքի) ազդում երեխաների զարգացվածության վրա:
Ֆիզիկական միջավայր	Ուսումնասիրել նախակրթարանի շենքային պայմանները՝ ջեռուցում, ջրամատակարարում, վերանորոգվածություն, սանիտարահիգիենիկ վիճակ, նկարագրել նախակրթարանի մոդելը՝ աշխատանքային ժամերը, սնունդը, անհրաժեշտ սենյակների, պարագաների և աշխատանքային կենտրոնների առկայությունը և դրանց համապատասխանությունը սահմանված նորմերին: Անհրաժեշտ է նաև պարզել միկրոծրագրում ընդգրկված երեխաների խմբերի քանակը, միկրոծրագրում ընդգրկված, համեմատական և ստուգիչ խմբերի երեխաների թվաքանակը՝ ըստ սեռի:

Աշխատանքների նկարագրություն

Ընտրանք

Ընդհանուր առմամբ, Ծրագրի շրջանակներում 2023-2024 թվականներին բացվել է 47 նախակրթարան։

2023-2024 թվականներին բացված նախակրթարանների բաշխումը՝ ըստ մարզերի

Աղյուսակ 1. Նախակրթարանների բաշխումն ըստ մարզերի

Մարզ	Քանակ
2023	
Արմավիր	9
Արագածոտն	8
Արարատ	3
Գեղարքունիք	8
Կոտայք	1
Ընդամենը	29[3]
2024	
Շիրակ	8
Տավուշ	1
Լոռի	2
Կոտայք	1
Երևան	9
Արագածոտն	2
Արմավիր	1
Ընդամենը	24[4]

Քանի որ ըստ Տեխնիկական առաջադրանքի՝ ընտրանքում ներառված նախակրթարանների թիվը յուրաքանչյուր մարզում պետք է լինի առնվազն 30%, նվազագույնը՝ 24 նախակրթարան, ուստի երեքից քիչ նախակրթարաններ ունեցող մարզերում ներառվել են բոլոր նախակրթարանները՝ առանց նախակրթարանների ընտրանքային չափանիշները կիրառելու, 3-8 նախակրթարաններ ունեցող մարզերում՝ ընտրվել են 3-ական նախակրթարաններ, իսկ առավելագույն՝ 9 նախակրթարաններ ունեցող մարզերում՝ 4-

[3] Կոտայքի և Արագածոտնի մարզերում բացված մեկական նախակրթարաններ 2024-2025 ուստարում չեն գործել։
[4] Երեք նախակրթարան ուսումնական գործընթացը սկսել է 2025-2026 ուստարում։

ական նախակրթարաններ։

Որոշ մարզերում նույն չափանիշների նմանատիպ ցուցիչներով նախակրթարանների առկայության դեպքում (այն է՝ հեռավորությունը Երևանից, խոշորացված համայնքի բնակչությունը, համայնքի տիպը, նախակրթարանում խմբերի քանակը) ընտրությունը կատարելիս հաշվի է առնվել տվյալ նախակրթարան փաստացի հաճախող 5-6 տարեկան երեխաների թիվը (Չափանիշների թվային արտահայտությունը տե՛ս Հավելված 1-ում՝ այստեղ)։

Այսպիսով, ունենք հետևյալ ընտրանքը 2023 և 2024 թվականներին բացված նախակրթարանների համար։

Աղյուսակ 1. Նախակրթարանների ընտրանքը՝ ըստ մարզերի

Տարի	Մարզ	Նախակրթարան
2023	Արմավիր	«Արմավիրի թիվ 10 հիմն. դպրոց» ՊՈԱԿ
		«Բերքաշատի միջն. դպրոց» ՊՈԱԿ
		«Մուսալեռի միջն.դպրոց» ՊՈԱԿ
		«Ակնաշենի միջն. դպրոց» ՊՈԱԿ
	Արագածոտն	«Աշտարակի Պերճ Պռոշյանի անվան թիվ 3 հ/դ» ՊՈԱԿ
		«Լեռնապարի միջն. դպրոց» ՊՈԱԿ
		«Աշնակի Գևորգ Չաուշի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ
	Գեղարքունիք	«Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ
		«Ծովագյուղի միջն. դպրոց» ՊՈԱԿ
		«Գեղհովիտի թիվ 1 միջն. դպրոց» ՊՈԱԿ
	Արարատ	«Հովտաշեն միջն. դպրոց» ՊՈԱԿ
		«Շաղափի Լ. Ղազարյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ
		«Սուրենավանի միջն. դպրոց» ՊՈԱԿ
2024	Երևան	«Երևանի Միսաք Մեծարենցի անվան 146 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
		«Երևանի թիվ 167 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
		«Երևանի Յ.Լեփսիուսի անվան թիվ 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
		«Երևանի թիվ 98 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
	Տավուշ	«Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
	Լոռի	«Վանաձորի Ավ. Իսահակյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
		«Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

	Կոտայք	«Աբովյանի Սամվել Անտոնյանի անվան N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
	Շիրակ	«Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
		«Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
		«Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Ընդամենը		24 նախակրթարան

Ե՛վ ուսումնական տարվա սկզբում, և՛ վերջում երեխաների թեստավորման համար կատարվել են այցելություններ 24 նախակրթարաններ: Աշխատանքային օրը սկսվել է վաղ առավոտյան և ավարտվել բավականին ուշ: Այնուամենայնիվ, աշխատանքային խումբը մեծ եռանդով է կատարել աշխատանքը՝ ներկայանալի և ճշգրիտ արդյունքներ ստանալու համար:

Ըստ մեթոդաբանության՝ յուրաքանչյուր հիմնական համայնքում պետք է թեստավորվեին 5-6 տարեկան 18 երեխա: Այնուհետև, յուրաքանչյուր համայնքի նախակրթարան հաճախող երեխաների խմբի համար պետք է կազմվեին համեմատական և ստուգիչ խմբեր, որոնք պետք է նույնական լինեին նախակրթարան հաճախող երեխաների խմբին /թիրախային խումբ/ իր բոլոր գլխավոր չափորոշիչներով՝ երեխաների քանակով, խմբի սեռային կազմով և խմբի տարիքային կազմով: Այդ իսկ պատճառով նախակրթարան հաճախող երեխաների խումբը թեստավորվել է համայնք կատարվող այցի սկզբում, որպեսզի ունենանք նախակրթարան հախաճող երեխաների խմբի կազմի բնութագիր:

Ուսումնական տարվա սկզբում նախակրթարանում ընդգրկված երեխաների թեստավորման համար դաշտային աշխատանքները տևել են 2024թ.-ի սեպտեմբերի 24-ից մինչև նոյեմբերի 30-ը, իսկ ուսումնական տարվա վերջում՝ 2024թ.-ի ապլիլի 9-ից մինչև մայիսի 20-ը:

Նախակրթարանում ընդգրկված երեխաների ընդհանուր թվից կազմվել է ներկայացուցչական ընտրանք՝ բաղկացած 18 հոգուց: Որոշ դեպքերում թեստավորվել են բոլոր ներկա երեխաները (հիվանդացության, համայնքից տեղափոխվելու, արտագաղթի և այլ պատճառներով բացակայություններ), չնայած որ արդյունքում ցանկալի քանակությունը (18 շահառու երեխա) չի պահպանվել: Այս առումով ամենափոքր քանակությամբ թեստավորումները (10-ից պակաս) կատարվել են՝ Արմավիրի մարզի «Արմավիրի թիվ 10

հիմն. դպրոց» ՊՈԱԿ-ում, «Բերքաշատի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ում, «Մուսալեռի միջն.դպրոց» ՊՈԱԿ-ում, Արագածոտնի մարզում՝ «Լեռնապարի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ում, Գեղարքունիքի մարզում՝ «Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ-ում, «Գեղհովիտի թիվ 1 միջն. դպրոց» ՊՈԱԿ-ում, Արարատի մարզի «Շաղափի Լ.Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, Տավուշի մարզի «Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում:

Համաձայն մեթոդաբանության՝ այն նախակրթարաններում, որտեղ համապատասխան տարիքի երեխաների թիվը չի հասել 10-ի, երեխաները համալվել են ընտրանքում չընդգրկված, սակայն հիմնական համայնքին մոտ գտնվող լրացուցիչ նախակրթարաններից:

Յուրաքանչյուր նախակրթարան այց կատարելուց առաջ այցի մասին նախապես զգուշացվել է միկրոծրագրի ղեկավարը կամ դաստիարակը, ճշտվել է համապատասխան թվով երեխաների ներկայությունը, ֆոկուս խմբային քննարկման համար համապատասխան թվով ծնողների ներկայությունն ապահովելու մասին:

Նախակրթարանների, լրացուցիչ և օժանդակ համայնքների, համեմատական խմբերի համայնքների բաշխումը ներկայացված է Հավելված 2-ում (տե՛ս այստեղ):

Հետազոտությունը՝ թվերով

Ուսումնական տարվա սկզբում և վերջում իրականացվել է 1544 ստանդարտացված հարցում՝ նախակրթարանում ընդգրկված և չընդգրկված 5-6 տարեկան երեխաների հետ, որից տարվա սկզբում թեստավորված երեխաների քանակը կազմել է 834 հոգի, տարվա վերջում՝ համապատասխանաբար 710: Ընդհանուր առմամբ, թեստավորվել են՝ թիրախային խմբի 305, համեմատական խմբի 406, և ստուգիչ խմբի 81 երեխաներ, որոնցից վերաթեստավորվել են համապատասխանաբար 257, 336 և 77-ը: Լրացուցիչ խմբերում թեստավորվել և վերաթեստավորվել են համապատասխանաբար 42 և 40 երեխաներ: Վերլուծությանը մասնակցել է 5-6 տարեկան 555 երեխա՝ 202 թիրախային խմբի երեխաներ,

247՝ համեմատական խմբի երեխաներ, 77՝ ստուգիչ խմբի երեխաներ: Վերլուծությանը մասնակցել են նաև լրացուցիչ համայնքներում թեստավորված 29 երեխաներ:

Ստուգիչ խմբի երեխաների հայտնաբերմանը հնարավորինս աջակցել են համայնքապետերն ու մարզային Կրթության վարչությունները: Որոշակի խնդիրներ են առաջացել այս երեխաներին հայտնաբերելիս, քանի որ պետականորեն այս կատեգորիայի երեխաների նույնականացված հաշվառում չի տարվում: Այդ է պատճառը, որ հիմնականում Կրթության վարչությունները կարողացել են օգնել միայն նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների թվաքանակը տրամադրելով (ծնվածների թվից հանելով ՆՈՒՀ հաճախողների թիվը): Սակայն հաշվի առնելով, որ տվյալները նույնականացված չեն, չեն ներառում միայն փաստացի բնակվողների թվաքանակը, այն առանձնակի չի օգնել ստուգիչ խմբի երեխաներին գտնելու գործին: Որոշ համայնքներում համայնքապետարանն աշխատող է հատկացրել տներով շրջելու ու փաստացի բնակվող ստուգիչ խմբի երեխաներին գտնելու համար: Հարցը հատկապես բարդ էր խոշոր համայքններում, որտեղ նույնիսկ այդ կառույցներում աշխատողների անձնական ծանոթությունները չէին օգնում գտնել/նույնականացնել ստուգիչ խմբի երեխաներին: Որոշ մարզերում, հուրախություն մեզ բոլորիս, նաև Ծրագրի շնորհիվ է նվազել նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը:

Աղյուսակ 2. 2024-2025թթ.-ի ուսումնական տարվա սկզբին և վերջին թեստավորված և վերաթեստավորված երեխաների քանակը՝ ըստ մարզերի

Մարզեր	Կատեգորիա	Տարեսկիզբ	Տարեվերջ
Արմավիր	Թիրախային	33	23
	Համեմատական	73	55
	Ստուգիչ	1	1
	Լրացուցիչ	16	14
Արագածոտն	Թիրախային	37	31
	Համեմատական	51	43
	Ստուգիչ	18	17
	Լրացուցիչ	7	7
Գեղարքունիք	Թիրախային	38	37
	Համեմատական	53	48
	Ստուգիչ	14	14
	Լրացուցիչ	9	9

Մարզեր	Կատեգորիա	Տարեսկիզբ	Տարեվերջ
Արարատ	Թիրախային	39	33
	Համեմատական	60	43
	Ստուգիչ	22	20
	Լրացուցիչ	-	-
Շիրակ	Թիրախային	46	39
	Համեմատական	34	34
	Ստուգիչ	1	1
	Լրացուցիչ	5	5
Լոռի	Թիրախային	33	28
	Համեմատական	42	32
	Ստուգիչ	16	16
	Լրացուցիչ	-	-
Տավուշ	Թիրախային	8	8
	Համեմատական	15	15
	Ստուգիչ	-	-
	Լրացուցիչ	-	-
Կոտայք	Թիրախային	15	13
	Համեմատական	18	15
	Ստուգիչ	9	8
	Լրացուցիչ	-	-
Երևան	Թիրախային	56	45
	Համեմատական	60	51
	Ստուգիչ	-	-
	Լրացուցիչ	5	5
Ընդամենը՝		834	710

Յուրաքանչյուր համայնքում իրականացվել է հարցազրույց տնօրենի, դաստիարակի հետ, ֆոկուս խմբային քննարկում շահառու երեխաների ծնողների հետ: Այլ կատեգորիաների հետ հարցազրույցները կատարվել են ըստ մեթոդաբանության սահմանած կարգի: Որակական հարցազրույցների բաշխումը ներկայացված է Հավելված 3-ում (տե՛ս այստեղ):

Արդյունքների վերլուծություն

Երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրության արդյունքները կներկայացվեն մարզային, համայնքային բաժիններով:

Հետազոտության որակական մասի վերլուծությունն իր մեջ ներառում է ֆոկուս խմբային քննարկումների վերլուծությունը, խորին հարցազրույցների վերլուծությունները և ֆիզիկական միջավայրի դիտարկումը, մինչդեռ քանակական մասի վերլուծությունը ներառում է երեխաների թեստավորումն ու պարապմունքների դիտարկումը:

Երեխաների թեստավորում

Նախակրթարաններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի վերլուծության համար կրկնակի թեստավորմամբ գնահատվել են նախակրթարան հաճախող թիրախային խմբի երեխաներ, համեմատական խմբի երեխաներ, որոք հաճախում են ոչ ՀԲ ֆինանսավորմամբ գործող նախակրթարաններում, և նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներ՝ ստուգիչ խումբ: Համեմատական կամ ստուգիչ խմբի երեխաները կա՛մ նույն համայնքի բնակիչներ են, կա՛մ որոշ համայնքների երեխաների փոքրաքանակության հետևանքով հնարավորինս մոտ գտնվող համայնքների/մարզերի երեխաներ: Թիրախային խմբի երեխաների տարեսկզբի/տարեվերջի թեստավորման արդյունքները համեմատվել են համեմատական և ստուգիչ խմբերի երեխաների տարեսկզբի/տարեվերջի թեստավորման արդյունքների հետ՝ ծրագրի արդյունավետության ուսումնասիրման նպատակով:

Ըստ մեթոդաբանության՝ երեխաների թեստավորման հարցաթերթը շոշափում է 5-6 տարեկան երեխաների զարգացման հետևյալ 5 ոլորտները՝ իմացական ոլորտ, լեզվի և հաղորդակցման ոլորտ, սոցիալ-անձնային և հուզական ոլորտ, ինքնասպասարկման և առողջ ապրելակերպի ոլորտ, շարժողական ոլորտ:

Երեխաների թեստավորման վերլուծությունն իրականացվել է հետևյալ սկզբունքներով.

- ուսումնասիրվող խմբերի զարգացման դինամիկայի վերլուծություն՝ ըստ ոլորտների, ըստ համայնքների,

- ուսումնասիրվող խմբերի զարգացման դինամիկայի վերլուծություն՝ ըստ ոլորտների, ըստ մարզերի,
- բոլոր մարզերի ընդհանրացված արդյուքների համեմատություն։

Վերլուծված տվյալները ներկայացվում են հիստոգրամների տեսքով և տոկոսային արտահայտվածությամբ: Յուրաքանչյուր պատկեր ուղեկցվում է վերլուծությամբ:

2023 թվականին բացված նախակրթարանների վերլուծությունը ներկայացված է Հաշվետվություն 2-ում, իսկ 2024 թվականին բացված նախակրթարաններինը՝ Հաշվետվություն 3-ում։ Այս հաշվետվությունները իրար հետ համադրելի չեն այնքանով, որ մի խումբ նախակրթարաններ գործում են արդեն 2-րդ տարին, այսինքն ավելի փորձառու են։ Ինչպես նաև, հարկ է նշել, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ) կողմից լիցենզավորված նախակրթարաններում գործում է միայն ավագ խումբ, իսկ դեռ չլիցենզավորվածներում կան նաև խառը տարիքային խմբեր ունեցող նախակրթարաններ, ինչն էլ իր հերթին ազդում է ուսման կազմակերպման վրա։

Պարապմունքի դիտարկում

Պարապմունքի դիտարկումը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել իրականացվող պարապմունքների կազմակերպման որակի մասին։ Պարապմունքների դիտարկման քարտերի վերլուծությունը իրականացվել է հետևյալ սկզբունքներով՝

- յուրաքանչյուր նախակրթարանի պարապմունքների դիտարկման քարտերի ամբողջական վերլուծություն՝ ըստ քարտում առանձնացված 5 չափանիշների,
- յուրաքանչյուր մարզի ամբողջական վերլուծություն՝ ըստ քարտում առանձնացված 5 չափանիշների,
- քարտում առանձնացված 5 չափանիշների ընդհանուր միջին ցուցանիշները՝ բոլոր նախակրթարանների կտրվածքով,
- քարտում առանձնացված 5 չափանիշների ընդհանուր միջին ցուցանիշները՝ բոլոր մարզերի կտրվածքով։

Ըստ մեթոդաբանության՝ առանձնացված 5 չափանիշներն են՝ ընդհանուր դրույթներ, մեթոդական հագեցվածություն, տրվող հարցեր, ուսուցման զարգացնող միջավայր,

դաստիարակի հմտություններ, որակներ:

Վերլուծված տվյալները ներկայացվում են հիստոգրամների տեսքով և տոկոսային արտահայտությամբ: Յուրաքանչյուր պատկեր ուղեկցվում է վերլուծությամբ:

Հարցազրույցներ, ֆոկուս խմբային քննարկումներ

Հարցազրույցներն ու քննարկումները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել միկրոծրագրի կառավարման, երեխաների կրթման ու դաստիարակման մասին:

Ուսումնասիրվել են հետևյալ կատեգորիաները՝ տնօրեն, դաստիարակ, նախակրթարանի ծնողներ և համեմատական ու ստուգիչ խմբի երեխաների ծնողներ:

Վերլուծությունն իրականացվել է ըստ յուրաքանչյուր նախակրթարանում հարցված կատեգորիաների ու ամփոփվել ըստ յուրաքանչյուր մարզի արդյունքների՝ ներկայացնելով տարբեր նախակրթարանների համեմատական պատկերը: Ներկայացվում է տեքստային վերլուծություն:

Ստանդարտացված հարցումներ

Ծնողների հարցաթերթերը վերլուծվել են ու համառոտ ներկայացվել է ընտանիքների ընդհանուր բնութագիրը: Վերլուծությունը տրվել է ըստ յուրաքանչյուր նախակրթարանի:

Ֆիզիկական միջավայրի դիտարկում

Նախակրթարաններում ֆիզիկական միջավայրի դիտարկման ուսումնասիրությունը կատարվել է՝ ըստ հետևյալ չափանիշների՝ օգտագործում, անվտանգություն, համապատասխանություն երեխայի չափսերին, անհրաժեշտ պարագաներով հագեցվածություն, պարագաների հասանելիություն երեխաներին, տարածքի շարժականություն, պարագաների սարքինությունը:

Իրականացվել է յուրաքանչյուր նախակրթարանում ու յուրաքանչյուր մարզի նախակրթարաններում ֆիզիկական միջավայրի դիտարկման ամբողջական վերլուծություն՝ ներկայացնելով նույն մարզի տարբեր նախակրթարանների համեմատական պատկերը: Վերլուծված տվյալները ներկայացվում են տեքստի, նկարների, հիստոգրամների միջոցով:

Հավելված 1. Չափանիշների թվային արտահայտությունները

Ներկայացնենք ընտրված չափանիշների թվային արտահայտությունների բաշխումն՝ ըստ մարզերի։

Մեթոդաբանությամբ սահմանված նախակրթարանների ընտրանքային չափանիշները հավասարակշռվել են՝ ցուցիչների ներկայացվածությունն ապահովելու համար։

Թվային միջակայքերը հավասարապես բաժանվել են երեք մասերի։

Աղյուսակ 1. Խոշորացված համայնքի բնակչության թվաքանակը /1000 մարդ[5]

Մարզ	Քիչ	Միջին	Շատ
2023			
Արմավիր	[16;33]	(33;50]	(50;66]
Արագածոտն	[10;28]	(28;46]	(46;63]
Գեղարքունիք	[36;51]	(51;66]	(66;80]
Արարատ	[38;56]	(56;73]	(73;90]

Աղյուսակ 2. Համայնքի հեռավորությունը Երևանից /կմ

Մարզ	Քիչ	Միջին	Շատ
2023			
Արմավիր	[14;38]	(38;61]	(61;84]
Արագածոտն	[21;41]	(41;62]	(62;82]
Գեղարքունիք	[75;105]	(105;134]	(134;163]
Արարատ	[22;38]	(38;54]	(54;69]

Աղյուսակ 3. Միկրոծրագրի գործարկման ֆինանսական միջոցների չափը / ՀՀ դրամ

Մարզ	Քիչ	Միջին	Շատ
2023			
Արմավիր	[5312900;7177867]	(7177867;9042834]	(9042834;10907800]
Արագածոտն	[4944000;8430934]	(8430934;11917867]	(11917867;15404800]
Գեղարքունիք	[6832400;7807367]	(7807367;8782334]	(8782334;9757300]
Արարատ	[6521800;6746134]	(6746134;6970467]	(6970467;7194800]
2024			
Երևան	[8376800;9646934]	(9646934;10917068]	(10917068;12187200]
Շիրակ	[6174300;7704900]	(7704900;9235500]	(9235500;10766100]

[5] population_01_01_24 (armstat.am)

Հավելված 2. Լրացուցիչ, օժանդակ և համեմատական խմբի համայնքների բաշխում

Տարի	Մարզ	Ընտրանք/ Նախակրթարան	Լրացուցիչ համայնք	Օժանդակ համայնք[6]	Համեմատական խումբ/ համայնքային մանկապարտեզ
2023	Արմավիր	«Արմավիրի թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	«Զարթոնքի միջն. դպրոց» ՊՈԱԿ	Առատաշեն Արագածոտնի մարզ	«Արմավիր քաղաքի թիվ 6 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Բերքաշատի միջն. դպրոց» ՊՈԱԿ	«Զարթոնքի միջն. դպրոց» ՊՈԱԿ		«Արմավիր համայնքի Արաքս գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Մուսալեռի միջն.դպրոց» ՊՈԱԿ	«Զարթոնքի միջն. դպրոց» ՊՈԱԿ		ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղական համայնքի «Շառլ Ազնավուրի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Ակնաշենի միջն. դպրոց» ՊՈԱԿ	«Զարթոնքի միջն. դպրոց» ՊՈԱԿ		«Գայի մանկապարտեզ» ՀՈԱԿ
	Արագածոտն	«Աշտարակի Պերճ Պոռշյանի անվան թիվ 3 հ/դ» ՊՈԱԿ		Լուսակն Հացաշեն Պարտիզակ Ցամաքասար Գառնահովիտ Եղնիկ Իրինդ Ագարակավան Վարդաբլուր	«Աշտարակ համայնքի թիվ 2 Արևիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ
		«Լեռնապարի միջն. դպրոց» ՊՈԱԿ	«Վարդաբլուրի Խ. Աբովյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ		«Նորաշեն գյուղի Վ. Մուքոյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Աշնակի Գևորգ Չաուշի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ			«Ներքին Բազմաբերդի մանկապարտեզ» ՀՈԱԿ
	Գեղարքունիք	«Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ	« ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջն. դպրոց» ՊՈԱԿ	Ախպրաձոր Արեգունի Վարդենիկ Ավազան Մաքենիս Լճավան	«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Ծովագյուղի միջն. դպրոց» ՊՈԱԿ			«ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ

[6] Խիստ անհրաժեշտության դեպքում ստուգիչ խմբի երեխաները վերցվել են հարևան մարզերից, ինչպես նախատեսված էր մեթոդաբանությամբ:

		«Գեղհովիտի թիվ 1 միջն. դպրոց» ՊՈԱԿ	«ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղի N1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Կոտայքի մարզ	« ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի մանկապարտեզ» ՀՈԱԿ
	Արարատ	«Հովտաշեն միջն. դպրոց» ՊՈԱԿ		Արևշատ Վերին Արտաշատ Դիմիտրով Բերդիկ Կանաչուտ Մխչյան	«Արտաշատ համայնքի Մխչյան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Շաղափի Լ. Ղազարյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ	«Զարթոնքի միջն. դպրոց» ՊՈԱԿ		«Դաշտաքարի «Գտնված երազ» մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Սուրենավանի միջն. դպրոց» ՊՈԱԿ			«Արարատ համայնքի Սուրենավան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ
2024	Երևան	«Երևանի Միսաք Մեծարենցի անվան 146 հիմնական դպրոց» ՊՈԱԿ		Կոտայքի մարզ Արմավիրի մարզ Արարատի մարզ	«Երևանի հ. 45 մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Երևանի թիվ 167 հիմնական դպրոց» ՊՈԱԿ			«Երևանի հ. 67 մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Երևանի Յ.Լեփսիուսի անվան թիվ 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	«Երևանի Վ.Վաղարշյանի անվան թիվ 80 հիմնական դպրոց» ՊՈԱԿ		«Երևանի հ. 116 մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Երևանի թիվ 98 հիմնական դպրոց» ՊՈԱԿ			«Երևանի հ. 131 մանկապարտեզ» ՀՈԱԿ
	Տավուշ	«Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	«Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Լոռու մարզ	«Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ
	Լոռի	«Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ		Մեղովկա Բլագոդառնոյե Գուգարք Գոգարան	«Սպիտակի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Վանաձորի Ավ. Իսահակյանի անվան	«Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ		«Վանաձորի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ

		թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ			
	Կոտայք	«Աբովյանի Սամվել Անտոնյանի անվան N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ		Գետամեջ Արամուս Թեղենիք Նոր Գեղի Արգել	«Աբովյանի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ
	Շիրակ	«Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ		Գյումրի Լոռու մարզ	«Թոռնիկ մանուշակ - մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ
		«Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ			
		«Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ			

Հավելված 3. Որակական հետազոտությունների բաշխումը՝ ըստ նախակրթարանների և կատեգորիաների

Նախակրթարան	Ֆոկուս խմբային քննարկում	Խորին հարցազրույց նախակրթարանի տնօրենի հետ	Խորին հարցազրույց նախակրթարանի դաստիարակի հետ	Սոցիալապես անապահով ընտանիքի ծնողի հետ	Հատուկ կարիքներով երեխայի ծնողի հետ	Խորին հարցազրույց համեմատական խմբի երեխաների ծնողների հետ	Խորին հարցազրույց ստուգիչ խմբի երեխաների ծնողների հետ
«Արմավիրի թիվ 10 հիմն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓	✓		✓	
«Բերքաշատի միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓				
«Մուսալեռի միջն.դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓			✓	
«Ակնաշենի միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓				
«Աշտարակի Պերճ Պռոշյանի անվան թիվ 3 հ/դ» ՊՈԱԿ	✓	✓	✓			✓	
«Լեռնապարի միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓				
«Աշնակի Գևորգ Չաուշի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓	✓			
«Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓			✓	
«Ծովագյուղի միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓	✓		✓	

Նախակրթարան	Ֆոկուս խմբային քննարկում	Խորին հարցազրույց նախակրթարանի տնօրենի հետ	Խորին հարցազրույց նախակրթարանի դաստիարակի հետ	Սոցիալապես անապահով ընտանիքի ծնողի հետ	Հատուկ կարիքներով երեխայի ծնողի հետ	Խորին հարցազրույց համեմատական խմբի երեխաների ծնողների հետ	Խորին հարցազրույց ստուգիչ խմբի երեխաների ծնողների հետ
«Գեղհովիտի թիվ 1 միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓			✓	
«Հովտաշեն միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓				
«Շաղափի Լ. Ղազարյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓				
«Սուրենավանի միջն. դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓	✓		✓	
«Երևանի Միսաք Մեծարենցի անվան 146 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓		✓	✓	
«Երևանի թիվ 167 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓	✓		✓	
«Երևանի Յ.Լեփսիուսի անվան թիվ 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓			✓	
«Երևանի թիվ 98 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓			✓	
«Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓			✓	
«Վանաձորի Ավ. Իսահակյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓			✓	

Նախակրթարան	Ֆոկուս խմբային քննարկում	Խորին հարցազրույց նախակրթարանի տնօրենի հետ	Խորին հարցազրույց նախակրթարանի դաստիարակի հետ	Սոցիալապես անապահով ընտանիքի ծնողի հետ	Հատուկ կարիքներով երեխայի ծնողի հետ	Խորին հարցազրույց համեմատական խմբի երեխաների ծնողների հետ	Խորին հարցազրույց ստուգիչ խմբի երեխաների ծնողների հետ
«Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓	✓		✓	
«Աբովյանի Սամվել Անտոնյանի անվան N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓	✓		✓	
«Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓			✓	✓
«Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓				
«Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	✓	✓	✓	✓			